

ԼՍՕՏՏ ԿՐԿՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
 Ա. ԾՆՆԴԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ

ԲԵԹՂԵՏԷՄԸ ՆՐԱԲԷՐ՝ ԴԱՌՆԱԼՈՒԻ ՔՐԻՍՏՈՍԻՆ

Աստուածաշունչին համաձայն, Ադամս ու Եւան մեղակեցին, որովհետեւ անհնազանդ գտնուեցան Աստուծոյ պատուերին, դաւաճանեցին իրենց կոչումին, եղծեցին իրենց աստուածային պատկերը եւ քստորուեցան դրախտէն: Մարդուն դրախտէն արտաքսումը, որոշ իմաստով, պայմանաւորեց աստուածային յայտնութեան շեշտաւորումը եւ ուղղութիւնը: Այլ խօսքով, հակառակ մարդու մեղակեցումին, Աստուած չհեռացաւ մարդէն: Աստուծոյ յայտնութեան աղբիւրը, Աստուածաշունչը կը պարզէ, թէ զանազան դէպքերու ու անձերու ճամբով Աստուած յիշեցուց մարդուն իր իւրայատուկ կոչումը եւ կոչ ուղղեց վերադառնալու իր Արարիչին՝ վերականգնելով իր Աստուածատուր շնորհները ու արժանիքները: Սակայն, մարդը մնաց խրատ մեղքի տիրոջ մէջ:



Աստուած, յաւիտեական սիրոյ աղբիւրը, չէր կրնար լքել իր մեղքին գերին դարձած մարդը: Ինչպէս Աւետարանիչը կը վկայէ, Աստուած այնքան սիրեց մարդը, որ իր Միածին Որդին ղըրկեց աշխարհ, որպէսզի մեղաւոր մարդը վերադարձնէ իր երկնաւոր Զօր (ՅԻ 3.16):

Քրիստոս՝ Երկրորդ Ադամը (Ա. Կր 15.45) մարդացաւ, որպէսզի ազատագրէ մարդը՝ առաջին Ադամի գործած մեղքին տիրապետութենէն ու վերականգնէ զայն Աստուծոյ պատկերին համաձայն: Քրիստոս ըսաւ՝ Ե՛ս եմ կեանքը, որպէսզի մարդը ապրի Քրիստոսի արիւնով մաքրագործուած կեանք մը: Քրիստոս ըսաւ՝ Ե՛ս եմ ճշմարտութիւնը, որպէսզի մարդը կարենայ իր կեանքին դիմաց Քրիստոսը նկատել իրա՛ւ ճշմարտութիւնը: Քրիստոս ըսաւ՝ Ե՛ս եմ ճամբան, որպէսզի մարդը կարենայ աշխարհի ճամբաներուն մէջէն ընտրել Քրիստոս-ճամբան:

Քրիստոս Աստուծոյ էջն է մարդուն, որպէսզի կարենայ մարդը բարձրացնել առ Աստուած: Քրիստոս Աստուծոյ մօտեցումն է մարդուն, որպէսզի կարենայ մարդը մօտեցնել Աստուծոյ: Քրիստոսի ծնունդով Աստուած մարդուն հետ եղաւ մարդուն փրկութեան համար: Աւետարանը Քրիստոսը կը բնութագրէ որպէս Եմմանուել, որ կը նշանակէ «Աստուած մեզի հետ» (Մտ 1.23): Քրիստոսի մարդեղացումով մարդը վերամարդացաւ իր աստուածաստեղծ եութեամբ ու կոչումով: Ինչպէս Առաքելալը կ'ըսէ, առաջին Ադամով մահ եկաւ աշխարհ, իսկ Երկրորդ Ադամով՝ կեանք (Հճ 5.18): Քրիստոսի խաչով մահը նուաճուեցաւ: Քրիստոսի յարութեամբ խորտակուեցաւ մարդուն թագաւորութիւնը ու հաստատուեցաւ Աստուծոյ Թագաւորութիւնը: Աստուծոյ Որդւոյն Տնունդը, ծնունդն է Նոր մարդուն:

Արդ, Բեթղեհեմը իրաւէր է ուղղուած մարդուն, հեռանալու առաջին Ադամէն ու դառնալու Երկրորդ Ադամին՝ Քրիստոսին: Իր երկրաւոր առաքելութեան աւարտին, Քրիստոս աշակերտներուն ըսաւ. «Միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհի վախճանը» (Մտ 28.20):

Սիրելի՛ հայորդիներ, Քրիստոս միշտ մեզի հետ է. արդեօք մենք Քրիստոսին հե՛տ ենք...: Ստածենք այս մասին: Յաճախ մեր առօրեայ զբաղումները ու մտահոգութիւնները, մեր հաճոյքն ու հանգիստը առիթ չեն տար, որ Քրիստոսի հետ ըլլանք: Մեր կեանքը տիրապետուած է այնպիսի կենցաղակերպերով ու գործելակերպերով եւ այնպիսի երեւոյթներով ու առաջնահերթութիւններով, որոնք յաճախ մեզ հեռու կը պահեն Քրիստոսէն: Մեր մեղաւոր անձերու փրկութեան համար աշխարհ եկած Քրիստոս կը մօտենայ մեզի, եթէ մենք պատրաստ ըլլանք մօտենալու իրեն. կը խօսի մեզի հետ, եթէ մենք պատ-

ԱՐԿՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
 ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
 6 Յունուար 2024
 Անթիպաս, Լիբանան
 Շաբ.՝ Էջ 5 >

ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ա. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄ

Սաղմութեանը ներքին վստահութեամբ կը յայտարարէ. «Ամէն անգամ որ խորհեցայ՝ թէ իյնալու վրայ եմ, քու սէրդ, Տէ՛ր, օգնութեան հասաւ ինձի: Ամէն անգամ որ բազմացան մտահոգութիւններս, մխիթարեցիր ու հրճուեցուցիր սիրտս» (Սղ 94.18-19):

Աստուծոյ շնորհքով տարի մը եւս բոլորեցինք եւ այժմ կը կանգնիք 2024-ի սեմին, մեր ետին թողելու 2023-ը եւ մուտք գործելու Նոր Տարուան շրջագիծէն ներս, նոր յոյսերով ու երազներով, նոր տեսիլքներով ու կեանքի հեռանկարներով: Ոմանց համար, անցնող տարին եղաւ յաջողութիւններով, բարիքներով ու ձեռքբերումներով պատկուած տարի մը. ուրիշներու համար՝ գոհացուցիչ, իսկ շատերու համար ալ եղաւ տագնապեցուցիչ, ցաւատանջ, մահու եւ կենաց մաքառումի տարի մը. պատերազմներու, երկրաշարժներու եւ այլ աղէտներու ենթարկուելով՝ անոնց պատճառով տնտեսական, քաղաքական անորոշութեան եւ ընկերային ու կենցաղային բարդ ու աննկարագրելի եւ անտանելի դժուարութիւններուն, նեղութիւններուն, տառապանքներուն եւ ամէնօրեայ մարտահրաւերներուն ենթակայ ըլլալու եւ անոնց դառնութեան բաժակը ցմրուր ըմպելու անվերջ տարի մը:



Այդ բոլորով հանդերձ, սակայն, կեանքը կը շարունակուի, բարի պատերազմը կը մղուի, ընթացքը կը փորձուի իր աւարտին հասցնել եւ հաւատքը պահել, միշտ ապահինելով Աստուծոյ անսուտ խոստումին. «Եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհի վախճանը»: Եւ հակառակ մարդոց եւ աշխարհի չարութեան ու անոնց կողմէ պատճառուած անմարդկային վերաբերմունքին եւ զանազան ողբերգութեանց ու դժուարութիւններուն, փա՛ռք իր խոստումներուն հաւատարիմ մեր Աստուծոյ, որ կը կատարէ իր խոստումը, եւ երկինքէն խոնարհելով կը մարդանայ, կը մարմնանայ եւ իր ձեռակերտին մօտ կու գայ: Եւ մենք, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Սուրբ եւ Հրաշափառ Ծննդեան տօնին առիթով, կը մտաբերենք Աստուածաշնչական խոստումներուն կարգ մը կատարումները իրենց օրինաբեր արդիւնքներով, թէ ի՞նչ տեղի ունեցաւ. որպէս արդիւնք մեծ խոստումին իրականացմամբ:

Խորհուրդ մեծ եւ սքանչելի, Աստուծոյ Սէրը մարդացաւ, եւ օգնութեան հասաւ մեզի: Ան մեր մէջ բնակեցաւ, որպէսզի տեսնենք իր փառքը եւ վերազանցենք մեր փառքը, որ կորսնցուցած էինք անհնազանդութեան պատճառով:

Ամերձեմալին ու անբովանդակելի մարմին եղաւ եւ խանձարուրով փայտուեցաւ ու մտուրի մէջ դրուեցաւ, որպէսզի մխիթարէ մեզ եւ սորվեցնէ մեզի խոնարհութեան ճամբով վերականգնել մեր պատիւը, որ արատաւորուած էր մեր մեղսասիրութեան եւ աշխարհասիրութեան պատճառով, եւ որպէս միակ Տէր ու Թագաւոր եւ Աստուած՝ մեր կեանքերուն վրայ տիրէ ու մեր սրտերուն մէջ թագաւորէ:

Բանը մարմին եղաւ, որպէսզի ինքզինք իբրեւ երկինքէն իջնող ճշմարիտ կեանքի հաց բաշխէ մարդկութեան եւ հրճուեցնէ մեր սրտերը, որպէսզի իրեն եկողը բնաւ չանօթենայ եւ իրեն հաւատացողը երբեք չծարաւնայ:

Աստուածորդին մարմնացաւ եւ հաճեցաւ Մարդու Որդի կոչուիլ, որպէսզի մեզ Աստուծոյ որդիներ եւ երկինքի բնակիչներ դարձնէ:

Բանը մարմին եղաւ, որպէսզի իրեն հետեւելու հրաւիրէ մեզ, որպէսզի իր մօտ երթալով եւ հեզութիւնն ու խոնարհութիւնը իրմէ սորվելով՝ գըտնենք եւ ստանանք մեր հոգիներու հանգստութիւնը:

Աղօթիք եւ օրհնութեամբ՝
 Մակար Եպս. Ազգարեան
 Առաջնորդ Բերիոյ Հայոց Թեմի
 6 Յունուար 2024
 Շաբ.՝ Էջ 5 >

Խմբագրական

2024-ԻՆ ՍՈՒՐԻԱՆ ԿՐՆԱՎՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԷՆ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԴՌՈՐՍ ԳԱԼ

Նախորդ տարին բարդ եւ ցաւոտ տարի մըն էր Սուրիոյ համար, յատկապէս նկատի ունենալով Փետրուարի երկրաշարժը, որ մարդկային զոհեր խլեց, թրջական հրոսակախումբերու Սուրիոյ հիւսիսային շրջաններէն տարածքներ գրաւելու շարունակող նկրտումները, Իսրայէլի շարունակական հրթիռակոծումները Սուրիոյ օդակայաններուն, Յոլոքներէն Յոմսի մէջ շրջանաւարտ դեսպաններու վկայականաց բաշխման արարողութեան ընթացքին անօդաչու սարքերով յարձակումն ու 80 երիտասարդներու զոհուիլը, ինչպէս նաեւ տնտեսական ծանր վիճակը, յատկապէս սղաճն ու սուրիական լիրային անկումը: Այդուհանդերձ յոյսի նշոյլներ երեւիլ սկսան արաբական երկիրներու հետ Սուրիոյ յարաբերութիւններու կարգաւորման, Յունուարին Արաբական Միացեալ Էմիրութիւններու արտաքին գործոց նախարարին Սուրիա այցելութեան, ապա Սուրիոյ նախագահին Ռուսիա այցելութեան, ժատտի մէջ արաբական լիկայի գագաթնաժողովի մասնակցութեան եւ մտերմիկ հանդիպումներուն՝ Եգիպտոսի նախագահին, Սեւտական Արաբիոյ Թագաւորին եւ այլոց հետ, այնուհետեւ նախագահին Չինաստան այցելութեան եւ տնտեսական յարաբերութիւններու կարգաւորման խոստումներուն լոյսին տակ, սակայն տարածաշրջանի լարուած վիճակը, այդ վիճակի բարելաւման մէջ ազդեցութիւն ունեցող պետութիւններու դերակատարութիւնը, անելին. Սուտանի, Կազգայի, այլեւ համաշխարհային մակարդակով տեղի ունեցող լարուածութիւններն ու տնտեսական ճգնաժամերը՝ Ուքրանիայէն մինչեւ Չինաստան, Խաղաղ ովկիանոս, Կարմիր ծով եւ այլուր պատճառ դարձան Սուրիոյ տագնապի լուծման գործնական քայլերու ուշացման:

Այդուհանդերձ այս տարեշրջանին, երկրի տնտեսական անկուն յառաջ մղման հիմնական քայլը ելեկտրականութեան ապահովման կարելիութիւններու բարելաւումը կրնայ ըլլալ, յատկապէս եթէ պետութիւնը լայն ծաւալներով կիրարկէ կենսուժի այլընտրանքային միջոցները, ելեկտրականութեան դասական ձեւերու ապահովման կողքին:

Ելեկտրականութեան մատակարարման բարելաւումը թափ կրնայ տալ արդիւնաբերական աշխատանքին եւ արտածումի ծաւալներու աճին, յատկապէս որոշ արտադրութիւններու արտածումին գծով պետութեան սահմանած թոյլտուութիւնները նկատի ունենալով:

Ելեկտրականութեան կողքին, անհրաժեշտ է կառավարելի դարձնել յատկապէս սննդամթերքի գիները, սերտելով տեղական արտադրութեան սննդամթերքի գիներու բարձրացման տուն տուող շարք մը ազդակները, չեղեալ համարելով կարգ մը ազդակներ, յատկապէս քաղաքէ քաղաք ապրանքափոխանակման տնտեսական դժուարութիւնները:

Տնտեսական փոքր ծրագիրներու կողքին, հարկ է աշխատանքի դիրութիւններ ստեղծել արդիւնաբերական մեծ ընկերութիւններուն համար, որպէսզի կարելի ըլլայ կանխել սուրիական դրամագլուխներուն դուրս գալը եւ մասամբ քաջալերել օտար ընկերութիւններու կողմէ շահարկումի տարբեր ձեռնարկները:

Սուրիական լիրայի արժեքին կայուն պահպանման համար անցնող տարուան մէջ կառավարութիւնը բաւական մեծ ճիգ թափեց ու հակառակ որ տարուան ընթացքին լիրային արժեքը կարելի եղաւ մասամբ կայունացնել, տարեվերջին կրկին անկում արձանագրեց:

Յետեւաբար տնտեսական որոշակի գործունեւորութիւններու բարելաւումով, սուրիական լիրայի արժեքին կայունացումով 2024-ին կրնանք ականատեսը ըլլալ տնտեսական ճգնաժամի մասնակի փարատումին, որուն եթէ ընկերակցին երկրի արտաքին յարաբերութիւններու աշխուժացումն ու արաբական թէ այլ երկիրներու հետ գործակցութեան դաշտի արդիւնաւորումը, յուսալի դռներ կարելի է բացուած տեսնել տարուան ընթացքին:

«Գ.»

-Սուրիոյ Խորհրդարանի նախագահ Յամուտա Սապպադ, Իրանի Իսլամական Շուրայի նախագահ Մուհամետ Պաքեր Զալիպովի իրաւերին ընդառաջելով, Խորհրդարանական պաշտօնական պատուիրակութեամբ Թեհրան մեկնեցաւ՝ մասնակցելու իսլամական գործակցութեան կազմակերպութեան անդամ պետութիւններու Խորհուրդներու ընկերակցութեան Պաղեստինի յանձնախումբի արտակարգ ժողովին եւ ասիական Խորհրդարանական միութեան Պաղեստինի յանձնախումբի առաջին նիստին:



Չոյզ ժողովներուն կը մասնակցի 60 պետութիւն՝ քննարկելու Խորհրդարանական գործակցութեան ընթացքը եւ պաղեստինեան իրավիճակը, յատկապէս Կազգայի դէպքերը եւ Կազգայի ժողովուրդին դէմ ի գործ դրուած իսրայէլեան ոճիրները:

Ժողովներու ընթացքին լուսարձակի տակ առնուեցան ասիական իսլամական պետութիւններու գործակցութիւնը, իսրայէլեան ոճիրներու շուտափոյթ դադրեցման միջոցներու որդեգրումն ու Կազգայի ժողովուրդին մարդասիրական օժանդակութեան առաջումը:

Սապպադ շեշտեց, որ զոյգ ժողովները հարկ է դրական եւ նպատակային արդիւնքներով եզրափակել, որպէսզի կարելի ըլլայ վերջ տալ Կազգայի մէջ իսրայէլեան ոճիրներուն, յատկապէս մասուկներուն եւ կիներուն նկատմամբ: Սուրիոյ Պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարեց, որ զինեալ ահաբեկչական խմբաւորումներ պայթուցիկ ական մը գետեղեցին Փալմիրի հարաւային բաժնի սուրիական անապատային շրջանին մէջ գտնուող զինուորական փոխադրակառքի մը մէջ, որուն հետեւանքով 8 զինուոր եւ 1 քաղաքացի նահատակուեցան, 13 վիրաւոր արձանագրուեցաւ:

-Սուրիոյ արտաքին գործոց փոխնախարար Պասսամ Սապպադ ընդունեց ՄԱԿ-ի ընդհ. քարտուղարին անվտանգութեան պահպանման գործունեւութեան հարցերու ներկայացուցիչ ժան Փիեր Լաքրուան, որուն ընկերակցեցաւ «Անտով» ՄԱԿ-ի բախումներու առկախման աշխատանքներու ղեկավար գործակալ Ներմալ Սապան եւ անոնց ընկերակցող պատուիրակութիւնը:



Յանդիպումին ընթացքին կողմերը Խորհրդակցեցան տարածաշրջանին մէջ «Անտով»-ի գործընթացին եւ այս գծով սուրիական կառավարութեան տրամադրած դիրութիւններուն շուրջ:

Սապպադ անհրաժեշտ համարեց 1967-էն ի վեր սուրիական գրաւուած Կոլանի ժողովուրդին դէմ իսրայէլեան իրարայաջորդ յարձակումները կանխելու գծով ՄԱԿ-ի որոշման գոյացումը, ինչպէս նաեւ Սուրիոյ գերիշխանութեան դէմ իսրայէլեան իրարայաջորդ յարձակումներուն դադրեցումը, շեշտելով, որ անվտանգութեան պահպանման բանակցութեանց գեկոյցներուն մէջ պէտք է մանրամասնօրէն ներառուին այդ յարձակումները:

Իր կարգին ՄԱԿ-ի ներկայացուցիչը յայտնեց, որ Սուրիա այցելութեան նպատակն է «Անտով»-ի գործընթացը հետապնդել եւ անոր կեդրոնները այցելել, ինչպէս նաեւ սուրիացի պատասխանատու մարմիններու հետ տեսակցիլ, յայտնելով, որ ՄԱԿ-ը իր կարելին ի գործ կը դնէ տարածաշրջանին մէջ լարուածութիւններ խուսափելու համար: Ան կրկին շնորհակալութիւն յայտնեց սուրիական կառավարութեան «Անտով»-ի գործընթացին տրամադրած դիրութիւններուն համար:

-Սուրիոյ Պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարեց, որ զինեալ ահաբեկչական խմբաւորումներ պայթուցիկ ական մը գետեղեցին Փալմիրի հարաւային բաժնի սուրիական անապատային շրջանին մէջ գտնուող զինուորական փոխադրակառքի մը մէջ, որուն հետեւանքով 8 զինուոր եւ 1 քաղաքացի նահատակուեցան, 13 վիրաւոր արձանագրուեցաւ:



-Պաղեստինեան Առողջապահութեան նախարարութիւնը զգուշացուց իսրայէլեան ուժերը իրարայաջորդ յարձակումներուն հետեւանքով «Շուհատա ալ-Աքսա» հիւանդանոցին ծառայութենէ դուրս գալէն, շեշտելով, որ հիւանդանոցին ծառայութենէ դուրս գալը Կազգայի մէջ հազարաւոր հիւանդներու եւ վիրաւորներու մահուան դատապարտում կը համարուի:



Նախարարութիւնը յայտնեց, որ Իսրայէլ հիւանդանոցը անընդհատ ինքնաթիռներով կը հրթիռակոծէ եւ սարսափի կը մատնէ հիւանդներն ու բժշկական անձնակազմը, անելցնելով, որ հիւանդներն ու վիրաւորները կը փորձեն հիւանդանոցէն դուրս գալ հրթիռներու տարափին տակ:

Լուրեր Հայաշխարհին

ՀՅԴ ԲԻՐՈՅԻ ՈՒՆԵՐՁ

Չարաբաստիկ 2023-ը կը մնայ մեր պատմութեան մէջ որպէս հայրենազրկման ու կորստի տարի: Դաւադիր պայմանաւորութիւններին ու յանցաւոր անգործութեան արդիւնքում հայաթափուցեց Արցախը, ունեցանք Յայաստանի ինքնիշխան տարածքի Նոր կորուստ, հարիւրաւոր Նուիրական գոհեր, խեղուած մարդկային ճակատագրեր: Իրադարձութիւններին նման ընթացքը կանխելու ջանքը ցաւօք բաւարար չեղաւ: Անտարբերութեան, սեփական ուժերի նկատմամբ թերահաւատութեան, պառակտուածութեան, ազգային-պետական շահերի ստորադասման արմատացած դրսեւորումները այդպէս էլ չկարողացան յաղթահարել: Ու դրա համար վճարեցինք շատ թանկ:

Աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական եւ ներագային խորքային վերափոխումների ներկայ հանգրուանում Հայաստանը եւ ողջ հայութիւնը տակաւին շարունակում են կանգնած մնալ ճգնաժամի եւ լրջագոյն մարտահրաւերների առջեւ: Ստեղծուած իրավիճակի յաղթահարման համար հեշտ ու արագ լուծումներ չկան: Մենք խնդիր ունենք թե՛ ներքին, թե՛ արտաքին ճակատում:



Արտաքին մարտահրաւերները հնարաւոր չի լինի յաղթահարել առանց ներքին մարտահրաւերները յաղթահարելու: Մեր բոլորի գերխնդիրն է՝ Նոր կորուստներ ու կենսական զիջումներ, անվտանգ ային իրավիճակի վատթարացում թոյլ չտալը: Այս ամէնը մենք ի գործ ենք անել եթէ վերականգնենք հաւատը մեր ուժերի նկատմամբ ու մեր ռեսուրսների ամբողջական գոյքագրմամբ պայքարենք ու գործենք առանց յոգնելու: Միայն այդ կերպ կարող ենք կանխել կորուստների, պարտութեան ու ազգային Նուաստացման այս կործանարար ընթացքը:

Օրուայ հայրենադաւ վարչախմբի ու թուրք-ատրպէյճանական տանդէմի կողմից մեզ պարտադրուող սին «խաղաղութեան» օրակարգին մենք պետք է հակադրենք մեր ազգային-պետական շահերից բխող իրական, արժանապատիւ խաղաղութեան օրակարգը, որը կ'ապահովի է՛լ Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութիւնը, անկախութիւնն ու անվտանգութիւնը, է՛լ Արցախի ժողովրդի ու Հանրապետութեան իրաւունքների պաշտպանութիւնը է՛լ ընդհանրապէս մեր ժողովրդի բարօրութիւնը:

Արդարութեան, արժանապատուութեան եւ հաւասարութեան արժեհամակարգերի վրայ հիմնուած մրցունակ, Նոր որակի ազգային պետութեան կառուցումը պետք է հռչակուի ազգային ռազմավարական Նպատակ:

Մենք հաւատում ենք մեր ժողովրդի հաւաքական իմաստութեանն ու ուժին եւ վստահ ենք, որ միասին կարողանալու ենք բեկել պատմութեան ընթացքը:

ՀՅԴ Բիւրո
10 Յունուար 2024

ՃԱՄԿՅԱԳԻՐ

ՀՅԴ Բիւրոն այսու իր խորին ցաւակցութիւնն է յայտնում Իրանի հոգեւոր առաջնորդ այաթոլլա Խամենեյին, Իրանի Իսլամական Հանրապետութեան Նախագահ Իպրահիմ Ռայիսիին եւ Իրանի պայքարունակ ժողովուրդին՝ Զերման քաղաքում ահաբեկչութեան հետեւանքով զոհուած 84 իրանցիների մահուան կապակցութեամբ:

Հայ ժողովուրդը լինելով ահաբեկչութեան զոհ՝ խորապէս գիտակցում է ահաբեկչութիւն երեւոյթի քստմնելի էութիւնը:

Խստօրէն դատապարտում ենք ցանկացած տեսակի բռնութիւն եւ ահաբեկչութիւն՝ լինեն դրանք անհատական թէ պետական մակարդակի վրայ:

Հայ եւ իրանցի ժողովուրդների բարեկամութիւնը հազ արամեակների անցեալ ունի եւ վստահեցնում ենք՝ ձեր վիշտը՝ Նաեւ մեր վիշտն է:

Վիրաւորներին ցանկանում ենք շուտափոյթ ապաքինում, իսկ Նահաւտակների ընտանիքներին՝ համբերութիւն:

ՀՅԴ Բիւրո
5 Յունուար 2024

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԺԱՄԱՆԵՑ ԶԱԹԱՐ

Երեքշաբթի, 9 Յունուար 2024-ին, ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, պետական յատուկ հրաւերով ժամանեց Տոհա (Զաթար): Նորին Ս. Օծութիւնը օղակայանին մէջ դիմաւորուեցաւ Զաթարի արտաքին գործոց Նախարարութեան պատասխանատուներուն, Արաբական Միացեալ Էմիրութիւններու, Զաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեանի, Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնա-



կան Վարչութեան Զաթարական Ժողովի համա-ատենապետ Գրիգոր Մահսերեճեանի, Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի ատենապետ Վարուժան Ներկիզեանի, Լիբանանի հիւպատոս Շանթ Վարդանեանի (դեսպանին բացակայութեան պատճառով) եւ ազգայիններու կողմէ:

Նշենք, որ Վեհափառ Հայրապետը Զաթար կը գտնուի եռօրեայ այցելութեամբ, որուն ընթացքին ան հանդիպում պիտի ունենայ Զաթարի վարչապետին, պետական պատասխանատուներուն եւ հայ գաղութի ներկայացուցիչներուն հետ:

ՔԱՆԱՆԻ «ԻՐԱՆ ՅՍՏԱԿ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԻ ՀԱՐԱՄՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ ՄԻՋԱՆՅՔՆԵՐՈՒՆ ՆԿԱՏԱՄԱՐ»

Իրանի Արտաքին Գործոց Նախարարութեան խօսնակ Նասեր Զանաւին, իր շաբաթական ճեպագրոյցին ընթացքին անդադարձած է Հարաւային Կովկասի իրավիճակին, տարածաշրջանի մէջ հաղորդակցութիւններուն եւ սահմանային հարցերուն:

«Իրանը յստակ դիրքորոշումներ ունի Հարաւային Կովկասի տարածաշրջանի իրավիճակին եւ տարանցիկ միջանցքներուն նկատմամբ: Մենք հսկայ ջանքեր կը գործադրենք տարածաշրջանի երկիրներուն մէջ խաղաղութիւն, կայունութիւն եւ անվտանգութիւն հաստատելու համար: Չարագոյց տարանցիկ գործակցութիւնը չի կրնար հիմք հանդիսանալ աշխարհաքաղաքական փոփոխութիւններու եւ երկիրներու տարածքային ամբողջականութեան եւ ազգային ինքնիշխանութեան խախտումին համար», ըսած է Զանաւին:



ՅՈՒՆԱՍՏԱՆ ԿԸ ՍՏԱՐԷ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՐԱՂՆԴԱՆ

«Արմենիա» կը տեղեկացնէ, որ Յունաստանի արտաքին գործոց Նախարար Եորդոս Երափեթրիթիս Հայաստանի արտաքին գործոց Նախարար Արարատ Միրզոյեանի հետ միատեղ ասուլիսի ընթացքին անդադարձաւ Յայաստան-ԵՄ յարաբերութիւններուն յայտնած է, որ Յունաստան կը սատարէ Երեւանի հետ յարաբերութիւններու ամրապնդման եւ Հայաստանի մէջ ԵՄ դիտորդական առաքելութեան տեղակայման:

«Յունաստան պիտի աշխատի ամրացնել հաստատութեանական երկխօսութիւնը մեր փորձագիտական հմտութիւններու մակարդակին վրայ՝ ըլլալով Եւրոմիութեան ամենահին անդամ պետութիւններէն մէկը», ըսած է Երափեթրիթիս:

Ան շնորհակալութիւն յայտնած է Հայաստանի արտաքին գործոց Նախարար Արարատ Միրզոյեանի շեքմ հիւրընկալութեան համար:

«Մեծ ուրախութիւն է եւ բացառիկ պատիւ՝ որպէս արտաքին գործոց Նախարար առաջին անգամ Երեւան գտնուիլս, ինչով կը հաստատենք երկկողմ յարաբերութիւններու իրաշալի մակարդակը եւ մեր պատրաստակամութիւնը՝ այլ աւելի սերտացնելու մեր յարաբերութիւնները: Այո՛, Յունաստան եւ Հայաստան ունին պատմական ամուր կապեր, բարեկամական յարաբերութիւններ, որոնք կառուցուած են դարերու ընթացքին», ընդգծած է Երափեթրիթիս:



ՄՆԱԼՈՎ ՏԵՍԼԱԿԱՆԻՆ ՐԱԲԱՏԱՐԻՄ

(ՀԱՄԱԳՎԱՅԻՆԻ 95-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)



Վրեժ-Վրեժ

Համագրայինի 95-ամեակը նշող տարին փակել է առաջ արդար է անդրադառնալ իր հիմնադիրներու տեսլականին եւ մտածել՝ ինչպե՞ս հաւատարիմ մնալ անոր ու յանձն առնել շարունակել երթը այս մեծ առաքելութիւն ունեցող կազմակերպութեան:

Կ'արժէ այստեղ կարճ մէջերում մը ընել այն յօդուածէն, որ Վահան Նաւասարդեան գրած է Համագրայինի հիմնադրութեան մասին: Որքան ալ հետաքրքրական ըլլան իր տուած այլ մանրամասնութիւնները, այստեղ կ'ուզեմ տալ այդ հիմնադրութեան որոշումը կայացնող ժողովի նկարագրութեան հետեւեալ հատուածը:

Ժողովականները բաժանուած էին երկու մասի. մէկը, գլխաւորութեամբ [Լեւոն] Շանթի, համեստ ծրագրի կողմակից էր, – «Լոյս» անունով ընկերութիւն հաստատել՝ միայն մէկ երկրորդական վարժարան հիմնելու ծրագրով:



Համագրայինի հիմնադրութեան յայտարարութեան օրը՝ 28 Մայիս 1928
Գահիրէի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ առջեւ

րով: Շանթի հետ էր [Նիկոլ] Աղբալեանը, ասելով՝ «շատ բան կ'ուզեմ. տուր ողո՞ւմ է. գիտնանք քչով գոհանալ, եթէ քիչն էլ լինի՝ նորէն շատ է»:

Միւս մասը կողմակից էր աւելի լայն ծրագրի, համագրայինի ծաւալով կրթական մշակութային կազմակերպութիւն ստեղծելու առաջարկութեամբ, որի առաջին ձեռնարկը պիտի լինէր – իր սկզբնական շրջանին, քանի կազմակերպութիւնը ծաւալած չէր գաղթաշխարհի մէջ – հիմնադրումը միայն մէկ երկրորդական վարժարանի:

Այս երկրորդ տեսակետի ջերմ պաշտպաններից էի ես՝ ինձ հետ ունեւալով մասնաւորաբար Համոյին [Օհանջանեան] եւ Ստեփանին [Եսայեան]:

Մտքերի երկարատեւ փոխանակումից յետոյ յաղթանակեց այս վերջին տեսակետը: Եւ իմ առաջարկով ընդունուեց հետեւեալ անունը նորաստեղծ կազմակերպութեան համար – «Հայ Կրթական եւ Հրատարակչական Համագրային Ընկերութիւն»¹:

Հեռուն նայող, լայն հորիզոնի վրայ բացուող հայեացք մը, որը մերը ըլլալու է ամեն ժամանակեւ աւելի: Ահա հինգ բառեր, որոնք կը բնութագրեն կազմակերպութիւնը եւ անոր էութիւնը՝ հայ – կրթական – հրատարակչական – համագրային – ընկերութիւն: Այդ բառերէն մէկը յետոյ աւելի ընդլայնելով պիտի դառնայ «մշակութային» եւ կազմակերպութիւնը այսօր պիտի կրէ Համագրային Հայ Կրթական եւ մշակութային Միութիւն անունը, եւ անունի վերածուած ածականը, դրուելով սկիզբը, պիտի ստանայ ա՛լ աւելի մեծ առում:

Այո՛, ի գուր չէ, որ մեծ տեսաբանը՝ Նաւասարդեան, պնդած է այդ առաջին՝ «համագրային» բառին վրայ: Այդ բառին մէջ կայ ամբողջ աշխարհի մը՝ հայաշխարհի, եւ ահա այդ բառն է, որ կը նշէ կազմակերպութեան դիրքաւորումը. ան չէ՛ կուսակցութեան մը, կողմի մը կազմակերպութիւնը, որ քան ալ վայելէ անոր հովանաւորութիւնը ու անոր գաղափարականին ջատագովը ըլլայ ան. իր նպատակը համագրային է, իր կոչումը համագրային է, իր ներուժը համագրային է: Ատկէ մեկնելով պիտի ըսենք նաեւ իր աշխատանքը համագրային պիտի ըլլայ, այսինքն՝ բոլոր առնչուած կազմակերպութիւններուն եւ հաստատութիւններուն հետ գործակցաբար պիտի գարգացնէ իր գործունէութիւնը Սփիւռքի մէջ, թէ հայրենիքի:

Երկրորդ բառը «հայ»-ն է: Այդ ալ պատահականութեամբ չէ, որ ընտրուած է: Պարզապէս հայկական կազմակերպութիւն մը ըլլալը չէ՛, որ կը նշուի այդ բառով: Ան հայ է իր ուղն ու ծունծով եւ իր հայ ըլլալով է, որ համամարդկային է: Ան հայութեան կը ծառայէ եւ հայութեան ծառայելով է, որ մարդկութեան կը ծառայէ: Հայութեան մտահոգութիւններն են իր օրա-

կարգին վրայ, հայութեան կարիքներն են իր ծրագրերուն հիմքը: Ինչպէս պարզապէս ածական մը չէ «համագրային»-ը, այնպէս ալ պարզապէս ածական մը չէ «հայ»-ը, այլ՝ պատկանելութիւն մը, այդ պատկանելութեան խոր գիտակցութիւն մը: Ինքնութիւն մը, բայց առանց այլամերժութեան եւ առանց ցեղապաշտութեան, ինչ որ յարիր պիտի չըլլար Դաշնակցութեան իսկ գաղափարաբանութեան:

Հիմա նայինք «կրթական» եւ «մշակութային» բառերուն, որոնք կը ճընդեն ծիրերը այս կազմակերպութեան գործունէութեան, եւ անդրադառնանք, թէ «կրթական»-ը գետեղուած է «մշակութային»-էն առաջ: Առանց կրթականին, մշակութայինը ինչպե՞ս կրնայ գոյութիւն ունենալ:

Նպատակ չունիմ թուելու «Համագրային»-ի անցնող 95 տարիներու կատարուած աշխատանքները այս ծիրերէն ներս. ատոնք արդէն կը պատկանին պատմութեան: Ատոնց գնահատումս ալ կը թողեմ ապագայ պատմաբաններուն: Բայց չեմ կրնար չանդրադառնալ ներկայ կարիքներուն, որոնք պիտի ճշդեն մեր գալիք ուղին:

Ինձի համար այսօր թիւ մէկ խնդիրը մեր լեզուի պահպանումն է՝ հայերէնի՝ պահպանումը. ոչ թէ միայն արեւմտահայերէնի, այլ հայերէնի՝ իր երկու լեզուաճիւղերով, որոնք կը գտնուին աղաւաղման, խաթարման ու ի սպառ անհետացման վտանգին առջեւ: Լեզուի պահպանումը՝ իր բոլոր ստորոգելներով կամ բոլոր առնչումներով, դպրոցներու հարիւրապատիկ բազմացումով Սփիւռքի մէջ, այդ դպրոցներուն համար ուսուցիչներու դաստիարակութեամբ, ամենուրեք տեղւոյն յարմար կրթական ծրագրերու եւ դասագրքերու պատրաստութեամբ, գրականութեան զարգացումով, մանաւանդ մանկական, պատանեկան եւ երիտասարդական տարիքներուն համար, ժամանակակից բառարաններու եւ լեզուի ուսուցման անհրաժեշտ քերականութեան եւ ուղղախօսութեան դասագրքերու հրատարակութեամբ՝ մասնագիտական պատրաստութեամբ ու ներկայ արդի մօտեցումներուն համապատասխան:

Մշակութային գործունէութիւնը պիտի գայ ամբողջացնելու կրթական գործունէութիւնը. թատրոնը, մանաւանդ արդի կեանքին առնչուած հայերէն նոր թատերախաղերով, շարժանկարն ու այլազան տեսանկյունները, երգն ու պարը, ասոնց բոլորին անհրաժեշտ դեկորատիւներն ու դերակատարներն ու մասնագիտական պատրաստութիւնը, ներկայացումները, անոնց հիւրախաղերը եւ այլն, եւ այլն: Այս ծիրէն ներս ալ տակաւին թանգարանները՝ ներառելով անոնց ստեղծումը Սփիւռքի բոլոր հայաշատ վայրերուն մէջ եւ չանտեսելով «Համագրային»-ի բոլոր մակարդակներու վարչութիւններուն եւ գեղարուեստական խումբերու, ինչպէս նաեւ անհատ մտաւորականներն ու արուեստագէտներու արխիւներու պահպանումը՝ թուայնացմամբ եւ այլապէս, արուեստագէտներու գործերու փրկութիւնը անոնց մահէն ետք՝ երբ անժամանակ կը մեկնին այս աշխարհէն, գիտածողվներու յաճախակիացումը եւ այդ ոչ միայն հայրենիքի մէջ:

Խօսելով հայրենիքի մասին, կ'ուզեմ շեշտել, թէ որքան կարեւոր է Համագրայինի տարածումը բոլոր մարզերուն եւ բնակավայրերուն մէջ, անոր գործունէութեան ընդլայնումը՝ ամկայ գեղարուեստական խումբերու գործակցութեամբ, արուեստագէտներու քաջալերումը եւ տակաւին ինչեր:

Համագրայինին կ'իյնայ նաեւ քաղաքական բոլոր մակարդակներուն վրայ՝ համաշխարհային, շրջանային թէ տեղական, կապեր ունենալ կրթական թէ մշակութային կազմակերպութիւններու, հաստատութիւններու թէ անհատներու հետ՝ ներառեալ լրատուական մարզէն ներս՝ փոխադարձ ծանօթացման եւ համագործակցութեան համար, միշտ ի նպաստ ու ի փառս համայն հայութեան:

Այս բոլորը, սակայն, պիտի ըսուի դրամի կը կարօտին եւ ահա կու գանք կազմակերպութեան անունին վերջին բառին՝ «միութիւն»: Գիտենք, չէ՞, որ միութիւնը զօրութիւն է: Աւելին ըսելու պէտք կա՞յ:

95 տարի առաջ, Եգիպտոսի մէջ, օրուան նեղ պայմաններով, Համագրայինը հիմնելու համար եթէ հիմնադիրները յաջողեցան գոյացնել անհրաժեշտ հազար եգիպտական ոսկին, այսօր հայութեան ունեցած անբաւ հարստութեամբ հնարաւոր չէ՞ ստեղծել 1000 միլիոնի դրամագլուխ մը եւ ծրագրումով անցնիլ գործի՝ քայլ առ քայլ իրականացնելու նոր վարժարան առ նոր վարժարան, նոր ծրագիր առ նոր ծրագիր:

Անկասկած կարելի է, եթէ ըլլան գիտակցումը, հաւատքն ու կամքը: Հաւատարիմ՝ հիմնադիրներու տեսլականին:

¹Վահան Նաւասարդեան, «Համագրային»-ի եւ իր ճեմարանի հիմնադրութեան շուրջ, Յուսաբեր (բացառիկ՝ նուիրուած Վահան Նաւասարդեանի յիշատակին), տպարան «Յուսաբեր», 1957, Գահիրէ (պահած եմ ուղղագրութիւնը այնպէս ինչպէս տպուած է այնտեղ – Վ.Վ.)

Թուրքիոյ նուրջ


«ԵՐԲ ՊՈՒՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆԻ ԱՐԽԻՒՆԵՐԸ ՍԵՐՏԵՅԻ, ՀԱՍԿՅԱՅ, ՈՐ ԱՅՂ «ՀԻԱՆԱԼԻ» ԿՈՉՈՒՍԾ ԹԱՆՉԻՍԱԹԸ՝ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՍԿԻՉԲԵ ԷՐ». ՊԱՏՄԱԲԱՆ ԹԱԼԻՆ ՍՈՒՃԵԱՆ

Ստորել կը ներկայացնենք «Outcasting Armenians: Tanzimat of the Provinces» (Վտարանդի հայեր - գաւառներու Թանզիմաթը) գիրքի հեղինակ, Գերմանիոյ Լուսովիկ-Մաքսիմիլիան համալսարանի Արեւելագիտութեան բաժնի թրքագիտութեան ամպիոնի գիտաշխատող, պատմաբան Թալին Սուճեանի հետ «Յորիգոն»-ի խմբագրակազմի անդամ Սոնա Թիթիգեան-Կետիկեանի կատարած հարցազրոյցը.

«Յորիգոն».- Վերջերս լոյս տեսաւ ձեր «Outcasting Armenians: Tanzimat of the Provinces» (Վտարանդի հայեր - գաւառներու Թանզիմաթը) խորագրով գիրքը, որուն շնորհանդէսը տեղի ունեցաւ 2 Նոյեմբեր 2023-ին, Մոնթրէալի մէջ: Ի՞նչը մղեց ձեզ Թանզիմաթի շրջանին մասին ուսումնասիրական նման աշխատանք հրատարակելու եւ քանի՞ տարուան վրայ երկարած է ձեր այս աշխատանքը:

Թալին Սուճեան.- Այս գիրքը 9 տարուան աշխատանքի արգասիքն է, որ ծնունդ առաւ երբ 2014 թուականին այցելեցի Փարիզի «Նուպարեան» գրադարանը, հետագոտութեան մը նպատակաւ: Յոն պատահաբար հանդիպեցայ Յայոց Պատրիարքարանի 19-րդ դարու նամակագրութեան թղթ-թածրարներուն եւ դիմեցի գրադարանի տնօրէն Պորիս Աճեմեանին, որ անմիջապէս գանոնք ներկայացուց ինձի:

Թուրքիոյ պետական գաղափարախօսութիւնը կը պնդէ, թէ հայերը արխիւ չունին, եւ թէ միակ աղբիւրը հայերուն մասին հետագոտութիւններ կատարելու համար Օսմանեան արխիւներն են, հետեւաբար գանոնք գըտնելը շուարեցուցիչ էր ինձի համար... Երկրորդ հանգումանը գանոնք նկարելն ու թուայնացնելն էր: Նշեմ, որ ես 2 տարի չկրցայ նայիլ այդ արխիւներուն, ներքին վախ ունեի, թէ ի՞նչ բան դուրս պիտի գար անոնցմէ: 2 տարի ետք երբ սկսայ կարդալ, զգացի թէ լրջագոյն պատմութեան մը դէմ յանդիման կը գտնուիմ... Հարստահարութիւնները, տարագրութիւններն ու աք-



սորները, որոնք յիշատակուած են այդ արխիւներուն մէջ, պետք է ի վերջոյ ճանչցուին, եւ գիտցուի, թէ թանզիմաթը հայերուն համար իրականութեան մէջ բոլորովին տարբեր իրավիճակ մը կը ներկայացնէ, եւ այդ իրողութիւնն է, որ 19-րդ դարը բնորոշած է: Ուրեմն երբ Օսմանեան պատմագրութեան հիմամբ 1923-ին եւ թանզիմաթին միջեւ կապ կը ստեղծուի, այդ կապը պետք է սերտուի նաեւ այս արխիւներուն տեղեկութիւններուն հիմամբ, որոնք իրենց արժանի տեղը պետք է գտնեն պատմագրութեան մէջ:

«Յ».- Գիրքը ընդհանուր առմամբ ծանրութեան կէտրոն ի՞նչ ընտրած է: Թ.Ս.- Գիրքը կը բաղկանայ չորս գլուխներէ. Առաջին գլուխին մէջ սերտուած է սահմանադրութիւնը. անոր նախորդող շրջանին ինչպէ՞ս կը կառավարուէին հայերը Օսմանեան կայսրութեան մէջ, ապա սահմանադրութեան յաջորդող շրջաններուն ի՞նչ կառավարական բնագիծեր ստեղծուած են, եւ անոնք բաղդատութիւնը իրարու եւ Նոյնիքն սահմանադրութեան հետ, որպէսզի յայտնաբերեմ, թէ թանզիմաթը ինչպէ՞ս ազդած է հայերու կառավարման ընթացքին վրայ: Ընդհանրապէս սահմանադրութիւնը ամանձնապէս կը սերտուի եւ կը մտածուի, թէ այդ եղած է միակ օրէնսդրութիւնը, բայց իրականութեան մէջ ժամանակի ընթացքին, երբ մարտավարութիւնը փոխուած է, անոր համեմատ նոր կանոններ ստեղծուած են: Այդ նոր կանոնները շատ անգամ Նոյնիքն հակասած են բուն սահմանադրութեան կամ ամբողջացուցած են գայն, շատ յաճախ նաեւ լեզուն, ոճը եւ տրամադրուածութիւնը փոխուած են, մանաւանդ երբ մտեցած է Համիտեան ժամանակաշրջանին:

Երկրորդ գլուխին մէջ քիւրտ-հայ-թուրք յարաբերութիւնները եղած են սերտորոշութեանս հիմքը՝ գաւառներուն պատմութեան եւ գաւառական հարստահարութիւններուն ընդմէջէն:

Երրորդ գլուխը կը վերաբերի հայ եւ յոյն յարաբերութիւններուն. ինձի

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻՆ ՀԱԿԱՏԱԽՈՐ ՄԻԱԲԱՆԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հաւատարիմ միաբան՝ Տ. Սուրեն Սրբ. Արք. Գաթարոյեան Բերիոյ Թեմէն ներս 27 երկար տարիներու ծառայութենէ, ապա Զանաթայի Թեմէն ներս գործելէ ետք իր հոգին աւանդեց Զանաթայի մէջ: Թէեւ իր սիրած հօտէն հեռու էր ան, սակայն զինք սիրող ձեռքերու մէջ էր, մնալով պարզութեան, անկեղծութեան օրինակը եւ թեմիս հաւատարիմ միաբանը:

Սրբազան հայրը լաւագոյնս ընդառաջեց գաղութի կարիքներուն իր առաջնորդութեան ընթացքին եւ պատասխանատու դեր ստանձնեց գաղութի կազմակերպական հպարտաշիջ յաջողութիւններու իրականացման մէջ: Ան մեծարեց իր առաքելութիւնը՝ մնալով յանձնառու իր պաշտօնի ծառայութիւններուն մէջ՝ իր տիպար ու կարգապահ կենցաղով, խստապահանջ սկզբունքներով ու թելադրութիւններով:



Սուրիահայութիւնը քաղցրօրէն վայելեց իր հայրութիւնը եւ զգաց իր քաջալերանքը իր նուիրական բոլոր գործունէութիւններուն ընթացքին: Ան ազգային բարձրագոյն խտելներով ու ազնուագոյն զգացումներով գօտեպնդուած առաջնորդեց իր հօտը, համերաշխութեան ոգի ղնելով հաւաքական մեր աշխատանքին մէջ: 27 տարի հայութեան սիրով մնանեցաւ մայր գաղութ Յալէպէն ներս ու փարեցաւ իր պատասխանատու պաշտօնին, հանդիսանալով բոլորիս արգասաբեր մշակը ու հոգածու հայրը: Ան իր հոգեկան գոհունակութեան իմաստը գտաւ ժողովուրդի ծառայութեան մէջ ու ձեռնհասօրէն վարեց հովիւի ծանր ու պատասխանատու պաշտօնը:

Սրբազան հայրը ժողովուրդին սորվեցուց սիրել եկեղեցին, քանի որ ան պետք ունէր հոգեւոր սնունդի: Նուիրուած իր խտելներուն, քալեց անոնց փշոտ ճամբաներէն՝ համակուած հայութեան սիրով: Յուզումով լեցուց մեր սրտերը իր երկարամեայ պաշտօնավարութեան ընթացքին, յատկապէս երբ նոր կառուցներով օժտեց համայնքը: Այսօր դրուատիքով կ'անդրադառնանք իր վաստակին եւ կը խոնարհինք իր նուիրումին առջեւ՝ մեր յիշողութեան մէջ տաքուկ անկիւն մը վերապահելով իրեն:

Անշուշտ իր գործունէութեան սահմանագծումը չենք կրնար ընել, սակայն ՍՕ Խաչի մեծ ընտանիքին անունով մեր երախտագիտութիւնը կ'ուզենք յայտնել, որովհետեւ 1984-ին, ՍՕ Խաչի Ընկերաբժշկական կեդրոնի կառուցման հիմնարկէք իր ձեռամբ կատարուեցաւ: Օրը Կիրակի էր, 28 Յոկտեմբեր, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած ՍՕ Խաչի երախտարի նկատեցալներու հոգեհանգստեան արարողութենէն ետք: Խաչուիները սրբազան հօր հետ, ուղղութեան դէպի կեդրոն, ուր ան բացումը կատարեց պատին գետեղուած յուշաքարին եւ օրինեց շէնքի հիմնարկէքը:

Յաջորդող երկու տարիներու ընթացքին շէնքը բարձրացաւ շնորհիւ բազմաթիւ նուիրատուներու ներդրումներուն եւ խաչուիներու հաւաքական ճիգերուն:

1987-ին, այս անգամ պաշտօնական բացումը կատարուեցաւ իր անարտին հասած ընկերաբժշկական կեդրոնին, ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին ձեռամբ, ուր իր սրտի խօսքը ուղղեց Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Սուրեն Սրբ. Արք. Գաթարոյեան ըսելով. «Այս պահուն Վեհափառ Յայրապետին հովանաւորութեամբ ոսկի օղակ մը կ'աւելցնենք պատմութենէն եկած մեր ոսկեայ շղթային վրայ, որովհետեւ այս կառուցը մեր մեծ քերթողաօր Մովսէս Խորենացիի տեսիլքէն ճառագայթող արութեան գործ մըն է. գործ մը, որ իր ծառայութեան մէջ առաւել կ'արժեւորէ Յայ Օգնութեան Միութիւնը եւ բոլոր խաչուիները»:

Սրբազան հայր, մեր ձայնը միացնելով Ձեր պատգամին, կը մաղթենք որ Ընկերաբժշկական կեդրոնը մնայ հարազատ տունը բոլորիս ու անցեալի նախանձախնդրութեամբ փոխանցուի յաջորդ սերունդներուն:

ՍՕ Խաչի Շրջանային Վարչութիւնը եւ համայն խաչուիները խորապէս կը ցաւին Ձեր կորուստին համար եւ այս տխուր առիթով կը բաժնեկցին Ձեր հարազատներուն սուգը: Թող Աստուած լոյսերու մէջ հանգչեցնէ Ձեր բարի հոգին, քանի որ Յալէպի մէջ հազարաւոր երախտագետ աշակերտներու, պաշտօնեաներու եւ Ազգ. Պատասխարանի սաներու յիշողութեան մէջ ունեցաք տաքուկ անկիւն մը:

Այսօր վերադարձ մը կատարելով անցեալի տարիներուն եւ պատմական դէպքերուն, որոնք իրենց դրոշմը ձգեցին մեր հոգիներուն մէջ, կը փոխանցենք մեր սրտի խօսքը, որպէս խօսուն վկայութիւն Ձեր երկարամեայ ծառայութեան եւ խնկելի յիշատակին:

ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՐԴԱՐՈՅՆ ՕՐՅՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ:

ՀԱՐՑԱԶՈՐՈՅ

ՀԱՄԱԲԿ ԸՄՊԱՂՋՈՒՐԵԱՆ. «ԵՐԵՒԱՆԻ ՀՐԶԱՆԱԼԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է Ի ՄԻ ԲԵՐԵԼ ԸԵՄԱՐԱՆԱԼԱՐՈՒԹՅՆԵՐՆ ՈՒ ԶՕՐԱՎԻԳ ԿԱՆԳՆԻԼ ՔԵԱ ԸԵՄԱՐԱՆԻՆ»

«Գանձասար» մտերմիկ հարցազրույց մը ունեցաւ Զարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի Շրջանաւարտից Միութեան Հայաստանի նորակազմ մասնաճիւղի վարչութեան անդամ Համբիկ Ճապաղջուրեանի հետ՝ Ճեմարանի առաքելութեան, ճեմարանականներու ընկերական կապին ու աշխարհի որ ծայրն ալ գտնուին անոնք պատկանելիութեան իրենց բարձր գիտակցութեան շուրջ: Ստորեւ կը ներկայացնենք զայն.

«Գանձասար»- Եօթը ամիսէ ի վեր արդէն կը գործէ ԶԵԱ Ճեմարանի Շրջանաւարտից Միութեան Հայաստանի մասնաճիւղը: Ի՞նչ նպատակով ծնունդ առաւ միութիւնը եւ ինչպիսի՞ գործունէութիւն կը տանի:

Համբիկ Ճապաղջուրեան- Միութեան հիմնադրութեան նպատակը հետեւեալն էր. Երեւանի տարածքին ճեմարանաւարտ մեծ մասսայ մը գոյութիւն ունի, որ կը գնա-

կյոյ հանդիպումին, որ տեղի ունեցաւ 10 Յունիս 2023-ին, պատուոյ նախագահն էր դոկտ. Յակոբ Զոլաքեան: Չրուցեցինք ճեմարանին օգտակար դառնալու տարբեր միջոցներուն մասին:

Յաջորդ մեր ձեռնարկը, հալէպեան անհաղթեան համաձայն, ֆուլի նախաճաշ մըն էր, ճեմարանաւարտ Յարութ Դազարեանի «Ժաւնո» ճաշարանին մէջ, նախաճաշին մասնակցեցաւ նաեւ ճեմարանաւարտ արուեստագետ Շանթ Դանիէլեանը ու ջութակով հնչեցուց հայկական մեղեդիներ, ինչպէս նաեւ հալէպահայ երգիչ Եղիա Բիլճեանը: Այս նախաճաշին նպաստեցին թէ՛ ճաշարանատէրը, թէ՛ ջութակահար Շանթն ու մենակատար Եղիան՝ իրենց սիրայօժար մասնակցութեամբ եւ թէ՛ վարչութիւնս՝ անհրաժեշտ պիտոճեն տրամադրելով: Նախաճաշի ընթացքին գրուցեցինք

րէն Եփփէ Ճեմարանին եւ ճեմարանի այդ տարուան պրովէի շրջանաւարտներուն խրախմբանքին ամբողջ ծախսը մենք հոգացինք: Ձեռնարկի հասոյթէն նախքան կամարը ճեմարանի բոլոր հայ պաշտօնեաներուն եւ Համազգայինի Հայկախոյ Կայանի Համագործակցութեան անհատական օժանդակութիւն տրամադրեցինք:

20 Օգոստոսին կազմակերպեցինք ընթրիք մը, որուն սիրայօժար իր մասնակցութիւնը բերաւ Զանաւարեան ժամանած, հալէպահայ սիրուած երգիչ Միւր Միւսանեանը:



Ուսումնական այս տարուան վերամուտին՝ 12 Սեպտեմբերին, գրեական պիտոյց պահովեցինք եւ տրամադրեցինք ԶԵԱ Ճեմարանի աշակերտութեան: 21 Հոկտեմբերին «Յառաջ» կեդրոնէն ներս կազմակերպեցինք հալէպահայ երբեմնի ուսուցիչ, գրող Գեորգ Պետրիկեանի «Սփիւռք» գիրքին շնորհակալեցող, որուն ներկայ եղաւ ու խօսք առաւ նաեւ ԱԶԵ Ճեմարանի ներկայ տնօրէն Չեփիւռ Է. Րէիսեանը: Այս ձեռնարկին մեզի օգտակար դարձաւ նաեւ կեդրոնի պատասխանատու տիկին Անի Բրդոյեան-Դազարեանը:

Նախաձեռնած ենք նաեւ տարբեր ոլորտներու մէջ՝ գիտական,

քային ժամերու համադրումն է: Գիտենք, որ Հայկախոյ մէջ, երիտասարդութեան մեծ մասը մինչեւ երեկոյեան ժամը 7:00- իր աշխատանքը կ'աւարտէ, որմէ ետք կը ծառայէ միութիւններէն ներս կամ կ'այցելէ ակումբներ՝ ընկերային մթնոլորտին մաս կազմելու: Այստեղ պարագան տարբեր է: Մեր երիտասարդները պարտաւոր են աշխատելու տարբեր ժամերու եւ մեծամասնութեան ազատ ժամերը չեն համընկնիր յաճախ: Մեր հիմնական մէկ այլ դժուարութիւնը իրականութեան մէջ կեդրոն չունենալն է, որուն կողքին երիտասարդներու աշխատանքային ժամերու տարբերութիւնը եւ աշխատավայրերու հեռավորութիւնը կը դժուարացնեն յաճախ անոնք ընկերային կեանքը եւ հանդիպումներու առիթը սակաւ կը դարձնեն: Բայց եւ այնպէս, մենք կը մտածենք համեստ կեդրոն մը ապահովել մեր կարելիութեան սահմաններուն մէջ, որպէսզի մարդահաւաքը աւելի դիւրին իրականանայ եւ մնայուն հանդիպումներու միջավայր մը ստեղծուի:

«Գ.»- Կը գտնուիք Հայկախոյ վրտահաբար այցելեցիք նաեւ ԱԶԵ Ճեմարան: Զեր կարծիքով ճեմարանի դերը ի՞նչ եղած է սերունդներու կապի պահպանման մէջ: Ի՞նչ կը յորդորէք ճեմարանի ներկայ աշակերտներուն:

Հ.Ը. - Ճեմարանը սոսկ կառոյց մը չէ, ճեմարանը այդ կառոյցէն ներս տիրող ներքին մթնոլորտն է, իսկ այդ մթնոլորտին մէջ մեծ դեր ունի հայ լեզուի եւ գրականութեան



դասաւանդութիւնը: Հայերէնի ուսուցումն ու օգտագործումը կը ստեղծեն անքակտելի կապ մը ճեմարանականներուն միջեւ, ինչպէս նաեւ հայկական իրականութեան հետ: Հայերէնը մեզ բոլորս կը միացնէ մէկ երդիքի տակ: Պատի՛ւ հայերէնաւանդ ուսուցիչ-ուսուցչուհիներուն, որոնք սատարած են ու կը սատարեն հայկական մթնոլորտի պահպանման: Եզրափակելով կը կարծեմ, որ հայերէնի պահպանման համար տարուող աշխատանքներուն մէջ խստապահանջ պէտք է ըլլալ Նոյնիսկ Սուրիոյ ծանր այս պայմաններուն մէջ, որովհետեւ լեզուն է մեր դիմագիծը պահողն ու մեզ Նոյն նպատակներուն շուրջ համախմբողը: Ճեմարանին դերը մեծ է այս առումով, իսկ մենք՝ շրջանաւարտներս, աշխարհի որ ծայրն ալ գտնուինք պիտի շարունակենք նեցուկ կանգնել ճեմարանին ու ճեմարանականներուն:

Հարցազրույցը վարեց՝ Զարմիկ Պողիկեան



հատուի ամուսնազն 200-250 շրջանաւարտներով: Այս շրջանաւարտները համախմբելու, անոնք միջեւ մշտական կապը պահելու, ինչպէս նաեւ ԶԵԱ Ճեմարանի գորավիզ կանգնելու նպատակով հիմը դրինք Երեւանի Շրջանաւարտից Միութեան: Փորձը կատարեցինք եւ առաջին հանդիպումը կազմակերպեցինք 14 Մայիս 2023-ին «Արամ Մանուկեան» կեդրոնէն ներս, համախմբելով 65-70 ճեմարանականներ, որոնք կարգին էին Ե՛ւ ճեմարանին մէջ դասաւանդած քահանայ-ուսուցիչներ Ե՛ւ գանազան նիւթերու ուսուցիչներ Ե՛ւ շրջանաւարտներ: Անոնք իրենց խօսքերով խրախուսեցին միութեան կազմութիւնը եւ այսպիսով ընթացք առաւ մեր աշխատանքը: Միութիւնը կազմեցինք խորհրդակցելով Հայկախոյ ԱԶԵ Ճեմարանի խնամակալութեան եւ Շրջանաւարտից Միութեան վարչութեան հետ, ինչպէս նաեւ փորձառու, երեք ճեմարանաւարտներու հետ: Յառաջացուցինք առաջին վարչութիւնը՝ ճեմարանին տրամադրելու նիւթական եւ բարոյական աջակցութիւն:

Երկրորդ ձեռնարկը հանդիպում մըն էր, մասնակցութեամբ ճեմարանի հայերէնաւանդ ուսուցիչներու, որոնք կը գտնուէին Երեւան կամ այլ երկիրներ եւ ամրան արձակուրդին ժամանած էին Հայաստան:

միութեան նպատակին շուրջ, շեշտելով որ մեր հիմնական նպատակը ճեմարանաւարտներու մթնոլոր-



տը պահելն ու յաճախակի հանդիպումներով գրուցելն է, ոչ թէ միայն նիւթական ապահովելը:

29 Յունիսին, օգտուելով ճեմարանի 1983-ի մեծաթիւ շրջանաւարտներու Երեւան գտնուելէն, կազմակերպեցինք պարահանդես մը՝ մատչելի գիներով եւ Հայկախոյ անհաղթեան մթնոլորտով, որուն իր սիրայօժար մասնակցութիւնը բերաւ ճեմարանաւարտ երգիչ Սուրէն Աճեմեան, իր նուագախումբով: Այդ ձեռնարկին հաւաքուցեալ կոկիկ գումար մը, որ անմիջապէս փոխանցուցեալ Հայկախոյ Ազգային Զա-

մարդական, արուեստի եւայլն, համաշխարհային վարկ վայելող ճեմարանականներու ալպով մը պատրաստութեան:

«Գ.»- Որո՞նք են ձեր դիմագրաւած հիմնական դժուարութիւնները՝ Հայաստանի շրջանաւարտները ի մի բերելու, նկատի ունենալով, որ Հայաստանի աշխատանքային ժամերը տարբեր են եւ չեն համընկնիր Հայկախոյ մեր սովորոյթներուն:

Հ.Ը. - Երեւան հաստատուած հալէպահայ երիտասարդներու հիմնական դժուարութիւնը աշխատանք-

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- Խոյ**
Նոր նպատակներ պիտի հետապնդեք եւ նոր մարդոց հետ պիտի ծանօթանաք այս շաբաթ: Ձեր շրջապատի մարդոց հետ լաւ յարաբերութիւններ պիտի մշակեք:
- Ցուլ**
Նիւթական գետնի վրայ բարելաւում պիտի արձանագրեք: Ընկերներու հետ հաճելի ժամանց պիտի ունենաք եւ խանդավառուիք:
- Երկուորեակ**
Յառաջիկայ օրերուն մեծ յաջողութիւն մը պիտի ունենաք ձեր կեանքին մէջ: Սերը պիտի թակե՛ք ձեր դուռը եւ ուրախանաք:
- Խեցգետին**
Աշխատանքի ծիրէն ներս մեծ խոչընդոտներ պիտի դիմագրաւեք: Ընտանիքի անդամներուն աւելի հասկացողութիւն ցուցաբերեցէ՛ք:
- Առիւծ**
Ձեր նախորդ օրերու աշխատանքի պտուղը վերջապէս պիտի քաղեք: Ձեր կեանքի ընկերոջ պիտի միանաք եւ փոխադարձ սիրոյ ու յարգանքի պահեր ապրիք:
- Կոյս**
Ձեր ընտանեկան յարկէն ներս տագնապներ տեղի պիտի ունենան եւ նոր բարեկամներ պիտի օժանդակեն ձեզ: Մի՛ յուսահատիք:
- Կշիռք**
Նոր գործի մը առաջարկը պիտի ընդունիք եւ մեծ յաջողութիւն արձանագրեք: Լաւատես եղէ՛ք եւ մի՛ դժգոհիք մանր-մուկ դժուարութիւններէն:
- Կարիճ**
Նոր իրեր պիտի աւելնան ձեր տան մէջ այս շաբաթ: Համբերեցէ՛ք եւ շուտով ամեն հարց լուծում պիտի գտնէ:
- Աղեղնաւոր**
Օտար երկիր փոխադրուելու ծրագիր մը ունիք: Մի՛ աճապարեք: Չգուշութեամբ վարուեցէ՛ք ձեր շուրջիներուն հետ: Մի՛ արհամարհեք զանոնք:
- Այծեղջիւր**
Այս շաբաթ ձեր ընտանիքին մէջ հաճելի փոփոխութիւններ տեղի պիտի ունենան: Հիւրասեր էք եւ խոնարհ: Բոլորին կողմէ պիտի վարձատրուիք:
- Ջրիս**
Գործի մէջ նորութիւններ պիտի ունենաք եւ յաջողութեան բարձր դիրքերու տիրանաք: Հաճելի անակնկալներ կը սպասեն ձեզի:
- Չուկ**
Եկամուտի մեծ աղբիւր մը բազում շահեր պիտի ապահովէ ձեզի: Նոր պարտականութիւններ պիտի ստանձնեք եւ հպարտանաք:



ԱՐՑԱԽԻ ԱՄԵՆԱՏԱՐԵՑ ԾԱՌԸ

Արցախի մայրաքաղաք՝ Ստեփանակերտէն 37 քիլոմետր հեռավորութեամբ, Մարտունի վարչական շրջանի՝ Սխտորաշէն գիւղին մէջ կը գտնուի հսկայ չինարի ծառ մը, որ մինչեւ իսկ անձնագիր ունի՝ որպէս սովետական միութեան օրերուն տարածքի ամենատարեց եւ ամենաբարձր ծառը: Չինարի ծառը կամ ինչպէս արցախցիները կը կոչեն՝ Տնջրի ծառը շուրջ 2036 տարեկան է:



Ծառը ունի 54 մետրէն աւելի բարձրութիւն, համարեա՛ 18 յարկանի շէնքի բարձրութեամբ, բունին շրջագիծը 27 մետր է, ծառին հսկայ փչակին մակերեսը 44 քիլոմետր է: Անոր վրայ կարելի է տեղադրել 100-է աւելի մարդ, իսկ սաղարթներու ստուերի մակերեսի տարածքը կը գրաւէ մօտաւորապէս 1400 քիլոմետր տարածք: Սխտորաշէնի այս յայտնի չինարին, իր արտասովոր չափերով կը գերազանցէ Եկեան ծովու Կոս կղզիի ծառերը, ինչպէս նաեւ Աշխապատի մօտ գտնուող Փիրուզէ կիրճի ծառը: Ծառի տակէն կը բխի մէկ յորդանատ եւ սառնորակ աղբիւր՝ Տնջրու աղբիւրը, որ դարեր շարունակ յագեցուցած է հնձուրներու ծարաւը, սնուցած է հսկայ չինարին, շարժած է ջրաղացի քարը:



Վտանգաւոր էր ծառին գոյութեան համար, այնուամենայնիւ այցելուները յաճախ մոմ կը վարէին ծառի փչակին:

Ըստ պահպանուած վիմագիր արձանագրութեան, աղբիւրը կառուցած են սխտորաշէնցի Յովհաննէս Կիսիբեկեանը, Ներսէս Մուսայելեանը եւ Մանաս Գասպարեանը:

Արցախի գրօսաշրջիկները, որոնք կը նախընտրէին «հարաւային երթուղին» կարելիութիւն կ'ունենային տեսնելու արցախեան ֆուլբորին մաս կազմող Սխտորաշէն գիւղին մօտ գտնուող աւելի քան 2000 տարեկան Տնջրի ծառը:

Մարդիկ երբեմն ապշած ծառի-հսկայ չափէն, տարբեր գրութիւններ կը ձգէին փչակին մէջ, թէւ մոմ վարելը արգիւյուած էր քանի որ ծառի փչակին:

ՀԵՏԱՔՐԵՐԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԾԱՌԵՐՈՒ ՄԱՍԻՆ

- 1- Ֆիկլանտայի մէջ անտառները կը գրաւեն երկրին 70% տարածքը, մինչդէռ Մեծն Բրիտանիոյ մէջ՝ ընդամենը 6 առ հարիւր տոկոսը: Այս իրավիճակը յառաջացած է արդիւնաբերական յեղափոխութեան հետեւանքով:
- 2- Սեքվոյան մուրալիկ ամենէն բարձր ծառն է, սակայն անոր փայտը առանձնապէս արժէք չունի կենցաղային օգտագործման մէջ, քանի որ շատ փխրուն է եւ չի գործածուիր տան իրեր պատրաստելու համար:
- 3- Բոլոր ծառերը անվտանգ չեն. Մանցիներ ծառի պտուղին հիւթը թունաւոր է, իսկ անոր շոգին բացասական ձեւով կ'ազդէ մեր աչքերուն եւ եւ շնչառութեան համակարգին վրայ:
- 4- Հիւսիսային կիսագունդին մէջ կ'աճին սոճիներու աւելի քան 100 տեսակ, իսկ հարաւային կիսագունդին մէջ մինչեւ օրս կը հանդիպինք միայն 1 տեսակի, քանի որ սոճի արհեստական անտառները տակաւին նոր յայտնուած են:
- 5- Պրագիլի մէջ կ'աճի «Նաւթատու» ծառ մը: Այս ծառի պտուղի հիւթին քիմիական բաղադրութիւնը կը նմանի մագուրի բաղադրութեան:
- 6- Երկրագունդի փշատերեւ ծառերուն գրեթէ կէսը կ'աճի Ռուսիոյ մէջ:
- 7- Միջին հաշուով, իւրաքանչիւր ծառ իր ողջ գոյութեան ընթացքին կը կլանէ շուրջ 1 թոն ածխաթթու կազ:
- 8- Իբրեւ համեմ օգտագործուող կասիան կը պատրաստուի հարաւային բելեռի ծառերուն չորացած կեղեւներէն, որոնք կ'ապրին Յոկաստանի եւ Սերբիանքայի մէջ:
- 9- Աշխարհի ամենամեծ ծառը կը կոչուի Ժեներալ Շերման: Ան կը գտնուի Զալիֆորնիոյ հսկայ անտառին մէջ: Ծառին բարձրութիւնը մօտ 84 մ. է: Ան առնուազն 2300 տարի կ'ապրի:

Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵՆՏՐՆ

-Սուրիոյ ֆուտբոլի հաւաքականը Կիրակի, 7 Յունուար 2024-ին ժամանեց Տաուհա՝ իր մասնակցութիւնը բերելու Ասիոյ ախոյեանական մրցումներուն: Հաւաքականը դիմաւորուեցաւ մեծաթիւ սուրիացիներու կողմէ, որոնք Տաուհայի օդակայանին մէջ ծաղիկներով եւ ազգային երգերով ողջունեցին խաղացողները: Նշենք, որ հաւաքականէն պիտի բացակայի հայ մարզիկ Մարտիկ Մարտիկեանը՝ վիրաւոր ըլլալուն համար:




-Սուրիոյ պաշտօնի տղոց Ա. դասակարգի ախոյեանական մրցումներուն, Հալէպի Ահլին յաջողեցաւ 82 - 74 արդիւնքով պարտութեան մատնել Դամասկոսէն ժամանած Ուահտէն: հանդիպումի ամբողջ տեսողութեան Ահլին կրցաւ տիրապետել արդիւնքին եւ յաղթել:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՀԱՍԱԿԵԱՐԴԱՅԻՆ ՖՈՒԹՅՈՒԼԻՍԻՍ ԼԵԿԵՏ ՖՐԱՆՑ ՓԵԿԵՆՓԱՈՒՐ ՄԱՐԶԱՐ

78 տարեկանին իր մահկանացուն կնքեց համաշխարհային ֆուտբոլի լեկետ, 1974 ֆուտբոլի աշխարհի ախոյեան, գերմանացի ֆուտբոլիստ Ֆրանց Փեկենփաուրը: Ըստ DPA գործակալութեան, գերմանացի մարզիկի ընտանիքին անդամները փոխանցած են, որ Ֆրանց մահացած է Կիրակի 7 Յունուարին: 1974 թուականի աշխարհի առաջնութենէն բացի, Փեկենփաուրը նաեւ արժանացած է Եւրո-1972-ի ախոյեանութեան: Միւսերի «Պաւարիայի» կազմին հետ գերմանացի պաշտպանը չորս անգամ տիրացած է Գերմանիոյ առաջնութեան՝ երեք անգամ նուաճած է Եւրոպայի Չեմփիընզ Լիկի գաւաթը: Փեկենփաուրը նաեւ երկու անգամ արժանացած է «Ոսկի գնդակ» մրցանակին:



Մահացած Սիթիի յարձակող Էրլինկ Հալանտ համամտութիւն յայտնած է մեկնելու այլ ակումբ՝ փոխան 100 միլիոն եւրոյի: Ըստ կարգ մը մարզական լուրերու, Ռեալ Մատրիտ իր պատրաստակամութիւնը յայտնած է վերոյիշեալ գումարով իր կազմին մէջ ներառնելու Նորվեկիացի խաղացողը: Այս մասին յայտարարած է նաեւ Football Espana-ն: Աղբիւրին համաձայն, Փրեմիեր Լիկի ակումբները պետք է ծախսեն առնուազն 200 միլիոն եւրո, որպէսզի համոզեն Մանչեսթըր Սիթին ազատ արձակելու Նորվեկիացի խաղացողը, մինչդէռ արտասահմանեան խումբերը կրնան կազմակերպել Հալանտի տեղափոխութիւնը 100 միլիոն եւրոյով: Աւելցնենք, որ վերջին երկու տարիներուն ընթացքին Ռեալի կազմը հետաքրքրուած էր ֆրանսացի խաղացող քիլիան Մպափեով, սակայն անոր անտարբեր կեցումը ներքին համար Ռեալ կը մտածէ ձեռքագառնել Մպափեէն եւ կազմին միացնել Հալանտը: Այս մրցաշրջանին 23-ամեայ Հալանտը Փրեմիեր Լիկին հետ մաս կազմած է 15 հանդիպումի եւ դարձած է 14 կոլի եւ 4 կոլային փոխանցման հեղինակ:

ՀԱՆՆԱՏ 100 ՄԻԼԻՈՆ ԵՐՈՅԻ ՓՈԽԱՐԵՆ ԿԱՐՈՂ Ե ՀՅՈՒՄԱՆ ՄԻՅԻՆ

Մանչեսթըր Սիթիի յարձակող Էրլինկ Հալանտ համամտութիւն յայտնած է մեկնելու այլ ակումբ՝ փոխան 100 միլիոն եւրոյի: Ըստ կարգ մը մարզական լուրերու, Ռեալ Մատրիտ իր պատրաստակամութիւնը յայտնած է վերոյիշեալ գումարով իր կազմին մէջ ներառնելու Նորվեկիացի խաղացողը: Այս մասին յայտարարած է նաեւ Football Espana-ն: Աղբիւրին համաձայն, Փրեմիեր Լիկի ակումբները պետք է ծախսեն առնուազն 200 միլիոն եւրո, որպէսզի համոզեն Մանչեսթըր Սիթին ազատ արձակելու Նորվեկիացի խաղացողը, մինչդէռ արտասահմանեան խումբերը կրնան կազմակերպել Հալանտի տեղափոխութիւնը 100 միլիոն եւրոյով: Աւելցնենք, որ վերջին երկու տարիներուն ընթացքին Ռեալի կազմը հետաքրքրուած էր ֆրանսացի խաղացող քիլիան Մպափեով, սակայն անոր անտարբեր կեցումը ներքին համար Ռեալ կը մտածէ ձեռքագառնել Մպափեէն եւ կազմին միացնել Հալանտը: Այս մրցաշրջանին 23-ամեայ Հալանտը Փրեմիեր Լիկին հետ մաս կազմած է 15 հանդիպումի եւ դարձած է 14 կոլի եւ 4 կոլային փոխանցման հեղինակ:



ԽԱԶԲԱՌ (ՄԻ 470)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլբրոշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- 1- «Պատմութիւն Հայոց» երկին հեղինակը:
- 2- Արժէք տայ:
- 3- Հաստատական պատասխան: Տառի մը անունը:
- 4- Ծիւղէ եւ արմատե անջատուած ծառ: Ժամանում:
- 5- Յաւի ճիշ: Երկվար: Վրան երկաթ ծեծելու պողպատե գանգուած: Հակառակ՝ տառի մը անունը:
- 6- Ուսի վրայ դրուող եկեղեցական կերպաս: Օտար:
- 7- Խառնատառ՝ թշնամական գաղտնի գործունեութիւն: Եական բայ:
- Փոքրացնող մասնիկ:
- 8- Փոքր, նորը: Պետութիւն՝ Հիւսիսային Ամերիկայի մէջ:
- 9- Հակառակ՝ ցերեկ օր: 301: Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «..... տակառը շատ աղմուկ կը հանէ»:
- 10- Արական անուն: Հակառակ՝ 4600: Տառի մը անունը:
- 11- Հետեւեալ խօսքին հեղինակը. «Ներե՛լ էք ուզում, յաղթէ՛ք նախ»:
- 12- Ուրախ կեանքով:


Ուղղահայեաց

- 1- Այն անտարանիչը, որ բժիշկ էր: Հակառակ՝ գիւնի կամ ջուրի երկայն փարջ, երկու կանթով:
- 2- Տարածքի միաւոր: Զէն: Արաբ իշխան:
- 3- Տառի մը անունը: Թափուր:
- 4- Առատ, յորդուն: Կրկնուած ձայնաւորներ:
- 5- Հակառակ՝ շարունակ: Երկբարբառ: Հակառակ՝ եռտասնի սեղան:
- 6- Հակառակ՝ բուռ: Տառի մը անունը: Հայ երգիչ:
- 7- Ձայնաւոր տառեր: Կարգ: Տառի մը հարեւանները:
- 8- Կրկնուած բաղաձայններ: Տարածքի միաւոր: Ժխտական նախածանց: Հակառակ՝ 7400:
- 9- Փորել, քրքրել: Հակառակ՝ իգական անուն: Հակառակ՝ 5010:
- 10- Կարմիր պտուղ մը: Անգօր: Տառի մը անունը:
- 11- Տառի մը անունը: Վանայ լիճի ձուկերէն:
- 12- Բայական լծորդութիւն: Կարգապահ:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 469)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	դ	ի	ւ	ց	ա	զ	ն	վ	է	պ		
2	ս	ւ	ք	զ	ա	ր	տ	ա	կ			
3	ր	ն	ի	զ	ա	կ	ի	կ				
4	ն	ր	ա	ս	ւ	պ	ա	ն	դ			
5	վ	ն	ա	ր	ա	ւ	ն	ր	ե	լ		
6	ա	ւ	ր	կ	ա	ր	ւ	ա				
7	ն	ն	տ	ե	ն	դ	մ	կ	ա	ն		
8	ք	ր	ա	ր	ա	ա	ն	կ	ա			
9		լ	ի	ա	լ	ր	ւ	ն	յ			
10	ր	ա	ր	ա	կ	ա	ն	ւ	ն	ի		
11	ի	ւ	ա	ա	ր	ի	ն	ւ	լ			
12	ծ	ա	յ	ր	ը	ա	յ	ր	ի	ն		

ԼՈՒՐԵՐ



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԲՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆՆԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՈՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Շաբաթ, 6 Յունուար 2024-ի առաւօտուն, մեր Տիրոջ Եւ Փրկչին Յիսուս Զրիստոսի Սուրբ Ծննդեան Եւ Աստուածայայտութեան տօնին առիթով հանդիսաւոր Սուրբ Եւ Ամահ Պատարագ մատուցուեցաւ Բերիոյ Յայոց Թեմի եկեղեցիներէն Ներս:

Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Աջգարեան, եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագ մատուցեց



Սրբոց Բառասկից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ Եւ Սուրբ Ծննդեան իր հայրական պատգամը ուղղեց ժողովուրդին:

Արժ. Տ. Նարեկ Ա. քիյ. Չերեցեան Եւ Արժ. Տ. Գառնիկ քիյ. Չափանեան:

Եկեղեցւոյ դպրաց դասը Պատարագի հոգեպարար երգեցողութեամբ տօնական մթնոլորտ ստեղծեց

ժեց Եւ հոգեկան ցնձութիւն պարգեւեց հաւատացեալներուն:

Յընթացս Սուրբ Պատարագին, սրբազան հայրը ջրօրհնէր կատարեց



Պատարագին Ներկայ գտնուեցան Սուրբիոյ Խորհրդարանի երեսփոխաններ Ժիրայր Ռէիսեան Եւ իրաւաբան Լիւսի Իսկէնեան, Բերիոյ Յայոց Թեմի Յարաբերական Մարմինի անդամ Վրեժ Եագուպեան, Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամներ, Ազգային Վարչութեան ատենապետ մեթր Սունայուլ Սունայուլեան, Ազգ. Վարչութեան Եւ Կրօնական Ժողովի անդամներ, ՅԱԸՄ-ի Կեդր. Վարչութեան անդամ եղբ. Աւետիս Տերվիշեան, հալէպահայ կազմակերպութիւններու, մշակութային, մարզական Եւ բարեսիրական միութիւններու Եւ հաստատութիւններու ներկայացուցիչներ Եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն:

Հանդիսաւոր թափօրով Եւ դըպրաց դասի «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ Սրբազան Յայրը մուտք գործեց եկեղեցի:

Գեղեցիկ էր տեսնել եկեղեցւոյ մէջ կարգ ու կանոնը պահող ՅԱԸՄ-ի Եւ ՅՄՄ-ի տարագաւոր սկաւտներուն ներկայութիւնը:

Շնորհաւորական բացիկներով Եւ բարեմաղթութիւններով Սուրբիոյ Պատանեկան Միութեան, ՅԱԸՄ-ի Եւ ՅՄՄ-ի անդամները դիմաւորեցին ժողովուրդի գաւակները:

Պատարագի ընթացքին սրբազան հօր ամբարշտականներն էին

րեց, որպէս խորհրդանիշ Զրիստոսի մկրտութեան: Խաչի կըքահայրն էր պատանի Գրիգոր Նարկիզեանը, որ Ս. Խաչը շալկած իր մասնակցութիւնը բերաւ արարողութեան:

Այնուհետեւ, առաջնորդ սրբազան հայրը, Ս. Ծննդեան իր հայրա-



կան պատգամը ուղղեց ժողովուրդին դիտել տալով, որ ողջ աշխարհով մէկ Յայոց. Առաքելական Ս. Եկեղեցին երկէ Եւ այսօր հոգեկան ցնձութեամբ, համաձայն առաքելական աւանդութեան Եւ պատմական իրողութեան տօնեց Եւ յիշատակեց մեր Տիրոջ Եւ Փրկչին Յիսուս Զրիստոսի Ս. Ծննդեան Եւ Աստուածայայտութեան տօնը, որոնց ճամբով

Ս. Երրորդութիւնը պատմութեան ընթացքին առաջին անգամ ըլլալով



ինքզինք յայտնեց մարդկութեան:

Սրբազան հայրը հիմնուելով Պատարագի ընթացքին պատանի դպիրին կողմէ ընթերցուած առաքելական Նամակին վրայ (Տիտ 2. 11-15), յայտնեց թէ Յիսուս Մանուկին ծնունդը Աստուծոյ կողմէ մարդկութեան յայտնուած շնորհքն է, որպէսզի բոլոր մարդիկ փրկուին: Սրբազան հայրը նշեց, թէ այդ շնորհքը մեզ կը մղէ անհաւատ կենցաղէ Եւ աշխարհիկ ցանկութիւններէ հեռանալու, Եւ զգաստութեամբ, արդա-



րութեամբ Եւ բարեպաշտութեամբ ապրելու այս աշխարհի մէջ, Նմանելով հովիւներուն Եւ մոգերուն, որոնք երբ լսեցին Զրիստոսի Ս. Ծննդեան աւետիսը, երկար ճանապարհորդութիւն յանձն առնելով գտան Մանուկ Յիսուսը Եւ խոնարհելով երկրպագեցին Անոր:

Սրբազան Յայրը Ս. Ծննդեան Եւ Աստուածայայտութեան տօնը լաւագոյն առիթը համարեց մեր սրտերը ինքնաքննութեան ենթարկելու, որպէսզի պատրաստ ըլլանք Տերը դիմաւորելու, որովհետեւ Զրիստոս իր անձը խոնարհեցուց մեզի համար, որպէսզի մեզ փրկէ, ազատէ մեր անօրէնութիւններէն Եւ մեզ մաքրելով՝ իր սեփական ժողովուրդը դարձնէ:

Սրբազան հայրը բերկրալի երեք տօներուն առիթով որդիական երախտագիտութիւն յայտնեց Եւ իր շնորհաւորական բարեմաղթութիւնները ուղղեց յորս նուիրապետական աթոռներու գահակալներուն՝ զոյգ

Վեհափառ Յայրապետներուն Եւ զոյգ Պատրիարք Յայրերուն, ինչպէս նաեւ եկեղեցւոյ անդամատանէն ներս բոլոր ծառայողներուն Եւ համայն աշխարհի հայորդիներուն: Ան յատկապէս բարեմաղթութիւններ ուղղեց Սուրբիոյ ժողովուրդին, անոր Վեմաշուք Նախագահին, հօգր բանակին, պետական Եւ կառավարական աւագանիին Եւ համայնքապետ եղբայրներուն: Ան Բերիոյ Յայոց Թեմի Ազգային Իշխանութեան անունով շնորհաւորեց թեմի տարածքին գործող բոլոր մարմինները, կազմակերպութիւնները, կրթամշակութային, մարզական Եւ բարեսիրական միութիւնները,

մաղթելով, որ աստուածային խաղաղութիւնը, սերը Եւ համերաշխութիւնը հանգի բոլորին սրտերուն մէջ:

Աւարտին, դպրաց դասը Ս.



Ծննդեան շարականներ երգեց, որուն ընթացքին սրբազան հայրը ընդունեց ժողովուրդի գաւակներուն շնորհաւորութիւնները Եւ Ս. Խաչով օրհնեց գաւակը: Ապա, Մակար Սրբազան թափօրով ուղղուեցաւ դէպի եկեղեցւոյ շրջափակը, ուր ՅԱԸՄ-ի փողերախումբը փունջ մը հայրենասիրական երգեր նուագելով տօնական մթնոլորտ ստեղծեց Եւ հոգեկան հրճուանք պարգեւեց ներկաներուն: Վերջապէս, փողերախումբին նուագակցութեան երգեցողութեամբ միացան ժողովուրդի



գաւակները, որոնք միասնաբար երգեցին «Կիլիկիա» մաղթերգը:

Աւարտին, Կրօնական Ժողովին կողմէ աղօթքով պատկերազարդ բացիկներ բաժնուեցան ժողովուրդի գաւակներուն:

Զրիստոս ծնաւ Եւ յայտնեցաւ. Օրհնեալ է յայտնութիւնն Զրիստոսի: Չեզի մեզի մեծ աւետիս:

Մարինա Չիլմբըշեան-Պողիկեան